

Հաստատում եմ՝ 4 մայիսի 2022 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի



ԿԱՐՇԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

### Համլետ Ռուդոլֆի Առաքելյանի

«Ներգործումը անգլերեն գովազդային մեդիադիսկուրսում»

Ժ. 02.07. – «Ռուսականագիտության լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Քննարկվող ատենախոսությունը նվիրված է ժամանակակից անգլերեն գովազդային մեդիադիսկուրսի ներգործման ուսումնասիրությանը: Այն նպատակ ունի լուծել մի շարք գործնական և տեսական խնդիրներ և այս առումով անշուշտ խրախուսելի է, քանի որ ժամանակակից մեդիայի ներգործումը զգալի դեր է կատարում մարդու մտածողության ձևավորման գործում:

Սույն աշխատանքում հեղինակն անդրադառնում է գովազդային մեդիադիսկուրսի ներգործման և ընկալման առանձնահատկություններին՝ ելնելով այն համոզմունքից, որ խոսքային ներգործման արդյունավետությունը կախված է անհատական գիտակցության և խոսքի ընկալման առանձնահատկություններիցովազդային մեդիադիսկուրսի տարբեր՝ մասնավորապես գործաբանական, ճանաչողական, հուզական մակարդակներում կատարված քննությունը օգնում է խնդրո առարկան ներկայացնել ամբողջական լույսի ներքո:

Պետք է փաստել, որ մերօրյա աշխարհի հասարակական և մշակութային զարգացման, ժամանակակից մարդու հաղորդակցման և ընկալման առանձնահատկությունների փոփոխությունների ուսումնասիրության համատեքստում կարևոր տեղ են գրավում մեդիատեքստերի վերլուծությունները: Մեդիադիսկուրսի վերլուծությունը միտված է վերհանելու այն փոխազդեցությունները, որոնք մեդիա տեքստերը ստեղծում են մարդու և աշխարհի միջև, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում ավելի լայն պատկերացում կազմել մեդիա ոլորտի հաղորդակցական նրբությունների մասին, քանի որ այն ներառում է «բոլոր արտալեզվական գործոնները, որոնք կապված են մեդիահաղորդագրության ստեղծման առանձնահատկությունների, այն ստացողի, հետադարձ կապի, կողավորման և ապակողավորման մշակութահեն միջոցների, ինչպես նաև պատմա-հասարակական և քաղաքական-գաղափարախոսական համատեքստի հետ:

Վերջին ժամանակներում գովազդը դարձել է ժամանակակից մարդու կյանքի մշտական ուղեկիցը և դժվար է թերագնահատել դրա ազդեցությունը մեր գիտակցության վրա՝ կամա, թե ակամա: Գովազդային տեքստերի լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և մեդիադիսկուրսում կիրառվող խոսքային հնարների բնութագրական հատկանիշների վերհանումը ու տեսակավորումը, թույլ են տալիս հասկանալ, թե ինչպես են դրանք ազդում մարդկային հասարակության, անհատի, հանրության մտածելակերպի վրա, ինչ սոցիալական, տնտեսական և անգամ լեզվական փոփոխությունների ու հետևանքների են բերում:

Թեև գովազդի ստեղծման և սպառման մշակույթը աստիճանաբար ամրապնդվում է մեզանում, կատարելագործվում են վերջինիս տարատեսակ դրսևորումները, սակայն դրանց՝ հոգելեզվաբանական դրսևորումների, լեզվաոճական հնարների միջոցով՝ գովազդային հաղորդումների ներգործման աստիճանը և արդյունավետությունը, հավանական սպառողի վրա ազդեցության այս տեսակ բազմակողմանի և փորձառական քննություն դեռևս չէր իրականացվել: Գուցե պատճառը նաև ընդհանուր մշակված մեթոդաբանության բացակայությունն էր, որը խոչընդոտ էր հանդիսանում գովազդային ներգործման ամբողջական պատկերը վերհանելու համար: Վերը նշված և այլ նկատառումները հաշվի առնելով, պետք է նշել, որ Համլետ Առաքելյանի ատենախոսությունը անշուշտ *արդիական է* ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների առումով:

Ատենախոսության *գիտական նորույթը* ապահովվում է նաև աշխատանքում կատարված հոգելեզվաբանական գիտափորձերի կիրառմամբ, որոնք հնարավորություն են ստեղծել նորովի վերլուծել է գովազդային տեքստի ներգործման առանձնահատկությունները և դրա արդյունավետությունը: Նոր է նաև գովազդային մեդիադիսկուրսի քննության արդյունքում վերհանված գովազդային լեզվում կիրառվող բազմաթիվ հնարների քննությունը՝ ըստ առանձնացված տիպերի: Ուսումնասիրության կարևորությունը որոշվում է նաև գովազդային մեդիադիսկուրսում՝ ընդհանուր լեզվի գործադրման ընթացքում կիրառվող լեզվական միջոցների դերի բարձրացմամբ, գովազդային տեքստերի մշակման արդյունավետությունը և դրանց ընկալման և ներգործման աստիճանը բարձրացնելու գործին նպաստելու առումով ևս:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը պարզաբանում է իր կանխադրույթները, կանգ է առնում թեմայի արդիականության, տեսական և գործնական նշանակության, նորարարության և հարակից մի շարք այլ հարցերի վրա՝ ուրվագծելով հետագա աշխատանքի հիմնական կառուցվածքն ու խնդիրները:

Առաջին գլխում («Մեդիադիսկուրսի և խոսքային ներգործման ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը») ատենախոսը հստակեցնում է հայեցակարգային հիմնադրույթները և դրանք քննարկում արդի լեզվաբանական մտքի և առկա հետազոտությունների դիրքերից: Աշխատանքի այս հատվածում հեղինակը քննության է առնում մեդիադիսկուրսը որպես ժամանակակից լեզվաբանության ուսումնասիրության առարկա, ինչպես նաև անդրադառնում խոսքային ներգործման քննության տեսական հիմնահարցերին: Ատենախոսության երկրորդ գլուխը («Խոսքային ներգործման միջոցներն անգլերեն գովազդային մեդիադիսկուրսում. փորձառական ուսումնասիրություն») անդրադառնում է գովազդային մեդիադիսկուրսի նպատակներին, գովազդային գործունեության ուսումնասիրությանը, դրանում առկա խոսքային ներգործման առանձնահատկություններին, ինչպես նաև վերլուծության են ենթարկվում անգլերեն ժամանակակից գովազդային մեդիադիսկուրսում կիրառվող լեզվական ամենատարբեր հնարներն ու միջոցները: Այս գլխի վերջին ենթագլխում մանրամասն նկարագրվում է հոգելեզվաբանական գիտափորձերի անցկացումը ու արդյունքների ամփոփումը: Ատենախոսության այս գլխում վեր են հանվել և ուսումնասիրվել են

անգլերեն գովազդային մեդիադիսկուրսում արդյունավետ խոսքային ներգործում ապահովող և հասարակության անդամների գիտակցության ձևավորման վրա ազդեցություն ունեցող լեզվական մի շարք միջոցներ:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության արդյունքները: Ընդհանուր բնութագրմամբ Համլետ Առաքելյանի ստենախոսությունը արդիական և բովանդակալից աշխատանք է, որն առանձնանում է հետազոտողի նպատակաուղղվածությամբ և իրազեկությամբ: Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ:

Համլետ Առաքելյանի ստենախոսությունը կարող է նպաստել մեդիալեզվաբանության, մեդիադիսկուրսի յուրահատկությունների վերլուծությանը և գովազդային տեքստերի մոդելավորմանը: Ստենախոսական նյութերը կարող են օգտագործվել ապագա բանասերների, գովազդի մասնագետների, լրագրողների, հոգեբանների մասնագիտական վերապատրաստման գործընթացում: Մասնավորապես՝ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել գովազդի լեզվական, հոգեբանաբանական հայեցակերպերին և խոսքային ներգործման հիմնախնդիրներին վերաբերող հատուկ և տեսական դասընթացներ կարգալիս, գիտական աշխատանքներ գրելիս:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. Ինչո՞վ է պայմանավորված հոգելեզվաբանական ազատ, ոչ թե ուղղորդված գիտափորձի անցկացման նախընտրությունը: Նաև ի՞նչ է նկատի առնվում «ճանաչողական զուգորդում» ասելիս:

2. Կցանկանայինք իմանալ՝ ինչն է լեզվաոճական հնարների՝ նշված հինգ խմբերի առանձնացման հիմքում և արդյո՞ք կան հնարներ, որոնք կարող են դասվել ավելին, քան առանձնացված խմբերից մեկում:

3. Ստենախոսության մեջ կարևորվում է տեքստը ստեղծողի մտածական գործընթացների առանձնահատկությունների վերհանումը: Ի՞նչ առանձնահատկությունների մասին է խոսքը տվյալ պարագայում:

Վերը նշված նկատառումները ամենին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացված է լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Սեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Համլետ Ռուդոլֆի Առաքելյանին շնորհելու քանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի մայիսի 4-ին կայացած N6 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝  
Ռուս-Հայկական (Սլավոնական)  
համալսարանի լեզվի տեսության և  
միջմշակութային հաղորդակցության  
ամբիոնի վարիչ,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Հաստատում եմ՝ 4 մայիսի 2022թ.

Գիտքարտուղար,  
բ.գ.թ.



Ա. Ա. Սիմոնյան

Ռ. Ս. Կասաբաբովա